ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

N 1/628

«24» 11 2016 թ.

Ձեր ______________

*«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ՝ Լ.ԴՈՅԴՈՅԱՆԻՆ*

*Հարգելի՛ տիկին Դոյդոյան*

Ի պատասխան ՀՀ ոստիկանության պետին հասցեագրված Ձեր՝ 21.11.2016թ-ի թիվ 331-ի 4 տեղեկատվություն ստանալու հարցման.

1. Ի կատարումն ՀՀ կառավարության 15.10.2015թ-ի թիվ 1204-Ն որոշման՝ 08.04.2016թ-ին ՀՀ ոստիկանության պետի կողմից ընդունվել է «Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձ նշանակելու, տեղեկատվության ազատության մասին օրենսդրության կիրարկումն ապահովող միջոցառումներ իրականացնելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի 2014 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 20-Ց ցուցումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 930-Ա հրամանը:

2. ՀՀ ոստիկանությունում տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձի մասին տեղեկատվությունը (անուն, ազգանուն, պաշտոն, կոչում, էլ. փոստի հասցե, հեռախոսահամար) տեղադրված է ՀՀ ոստիկանության պաշտոնական կայքում՝ http://www.police.am/images/Patasxanatu. M.pdf:

3. Կից ուղարկում եմ հիշյալ հրամանի քաղվածքը՝ ՀՀ ոստիկանությունում տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձ նշանակելու մասով:

Առդիր՝ «1» թերթ:

*ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԳՆԴԱՊԵՏ՝* *Մ.ՀԱԿՈԲՅԱՆ*

Կատարող՝ Գ.Պետրոսյան
Հեռ-010-59-66-16

0025 ք. Երևան, Նալբանդյան 130, հեռ. 596-424, քարտուղարություն՝ հեռ. 596-125

ՔԱՂՎԱԾՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ

# ՀՐԱՄԱՆ

Թիվ 930-Լ օր 1-ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՐԿՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17-Ի ԹԻՎ 20-Ց ՑՈՒՑՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ 1204-Ն որոշմամբ սահմանված N 1 հավելվածի 2-րդ և 4-րդ կետերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման աշխատանքները կազմակերպելու նպատակով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում (այսուհետ՝ ոստիկանություն) *տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու (այսուհետ՝ պատասխանատու) նշանակել ոստիկանության պետի աշխատակազմի ղեկավարին (ոստիկանության փոխգնդապետ Մ.Հակոբյան):*

ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ　　　　Վ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

«08» 04 2016թ.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ

Իսկականի հետ ճիշտ է՝
ՀՀ ոստիկանության պետի աշխատակազմի
Քարտուղարության առաջատար մասնագետ　　　　Ռ.Գրիգորյան